

«ՎԿԱՅՈՒԹԻՒՆՔ Ի ՊԷՏՍ ՔԱՐՈԶՈՒԹԵԱՆՑ»*
(իմաստուն ասույթներ քարոզների համար)

96. **Գրիգորի ասացեալ.** Ո՞վ ոք իցէ ի հաւատացելոցն յերկբայս ի ժամ զենման անարատ գառինն, բանալ երկնից և դասուց հրեշտակաց իջանել ի խորհուրդ Տեառն Յիսուսի Քրիստոսի, ուր խառնին ստորնայինքս ընդ վերնոյն և երկրաւոքս երկնայնոցն:

97. Խոնարհումն և զղջումն մեղաւորին է կերակուր Աստուծոյ, իսկ հպարտութիւն է տաղտկացումն:

98. Ոչ ինչ զոհ այնպէս հաճոյ է Աստուծոյ որպէս փրկութիւն մարդոյ:

99. Ամենայն գլխաւոր մեղք վերընծիւղին ի թիւնալից արմատոյ հպարտութեան:

100. Ոյ. ցանկայ նախագահ լինել մարդկան, ցանկայ յառաջանալ քան զՏէր իւր, որ է Քրիստոս:

101. Մի յամօթ արասցեն գործք քո զբանս շրթանց քոց, զի մի յորժամ խօսեսցես, ասասցեն՝ Ընդէ՞ր զոր ասեսդ ոչ առնես:

102. Ով մարդ ընդէ՞ր փքանաս, ով շարաֆ գարշահոտ ընդէ՞ր ուռնուս, ով մեռեալ մորթ զմէ՞ տարածիս. Քրիստոս՝ իշխանն քո խոնարհեալ և դու հպարտացեալ, գլուխն խոնարհեալ և անդամն հպարտացեալ:

103. Զայս ունի խրատն և իմաստութիւն, զի կեանս տայ ստացողին իւրոյ:

104. Բարկութեամբն կորուսանի իմաստութիւն, քանզի թէ զինչ և որպիսի պարտ իցէ առնել ոչ գիտէ, քանզի ի բաց խլէ զլոյս իմացմանն և շփոթէ զմիտս:

105. Հեզութիւն պահէ ի մեզ զպատկերն Աստուծոյ, որ է միշտ հանդարտ, այլ բարկութիւն՝ ցրուէ:

106. Մեղք որ ոչ ջնջի խոստովանութեամբ առժամայն ծանրութեամբն իւրով քարշէ յայլ մեղս:

107. Յայնժամ անարգին երկրաւորքն, յորժամ նկատին երկնաւորքն:

108. Որկրամոլութիւն է որոգայթ՝ եդեալ ի ճանապարհին, ընդ որ հարկ է գնալ. ի յանցն այն դարանակալ լինի որոգայթ ցանկութեան, յորմէ գայ բարկութիւն Աստուծոյ, զի որոգայթիւս այս ընդ բոնեաց սատանայ զնախահարսն:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1990 թ. № № Ը—Թ-ից և 1991 թ. № № Ա—Բ—Գ-ից:

96. **Գրիգորի կողմից ասված.** Հավատացյալներից ո՞վ է կասկածի մեջ ընկնում անարատ Գառնուկի զոհաբերման պահին, երբ բացվում է երկինքը և հրեշտակների դասերը իջնում են Տեր Հիսուս Քրիստոսի խորհուրդին, որտեղ ստորինները միանում են վերիններին, և երկրավորները՝ երկնավորներին:

97. Խոնարհումն ու զղջումը մեղավորի համար Աստծու կերակուր է, իսկ հպարտությունը՝ տաղտուկ:

98. Ոչ մի զոհ այնպես հաճելի չէ Աստծուն, ինչպես մարդու փրկությունը:

99. Բոլոր գլխավոր մեղքերը վերածվում են հպարտության թունալից արմատից:

100. Ով ցանկանում է նախագահ լինել մարդկանց, ցանկանում է իր Տիրոջից՝ Քրիստոսից առաջ անցնել:

101. Քո գործերը թող ամոթի չմատնեն քո շրթների խոսքերը, որպեսզի, երբ խոսես, չասեն «ինչո՞ւ չես անում, ինչ որ ասում ես»:

102. Ո՛վ մարդ, ինչո՞ւ ես փքվում, ո՛վ գարշահոտ թարախ, ինչո՞ւ ես ուռչում, ո՛վ մեռած մորթ, ինչո՞ւ ես տարածվում: Քրիստոս՝ քո իշխանը խոնարհվեց, իսկ դու հպարտացել ես, գլուխը խոնարհված իսկ անդամը՝ հպարտացած:

103. Խրատն ու իմաստությունը այն [հատկությունը], որ կյանք է տալիս այն ընդունողին:

104. Բարկությունից կորչում է իմաստությունը, որովհետև ինչ և ինչպես պետք է անել, չգիտի, քանի որ խլում է իմացության լույսն ու շփոթեցնում է միտքը:

105. Հեզությունը մեր մեջ պահում է պատկերն Աստծու, որ միշտ հանդարտ է, իսկ բարկությունը ցրում է [այն]:

106. Այն մեղքը, որ անմիջապես չի ջնջվում խոստովանությամբ, [իր] ծանրությամբ քաշում է այլ մեղքերի մեջ:

107. Երկրավորները անարգվում են այն ժամանակ, երբ ուշադրության են առնվում երկնավորները:

108. Որկրամոլությունը մի որոգայթ է՝ դրված այն ճանապարհին, որով պետք է գնալ: Դրանով անցնելիս՝ դարանակալ սպասում է ցանկության որոգայթը, որից գալիս է Աստծու բարկությունը, քանի որ սատանան այս որոգայթով բռնեց մեր նախահայրերին:

109. Ով որ սուրբ կարգը առնելուց հետո ընկնի բղջախոհական մեղքերի մեջ, այդպիսին պետք է լուծարվի իր կարգից:

110. Ներկան ցանկասիրությունը չի հագեցնում, ապառնին չարչարում է, իսկ անցյալը ցանկություն չի առաջացնում:

111. Մեծ կատարելությունը մեր անկատարությունը ճանաչելն է:

112. Ով որ չի կարող տանել ուրիշի անկատարությունը, վկայում է հենց ինքն ի՛ր անկատարությունը:

113. Ով որ տարված լինի ներկայի քաղցրությամբ, կմատնվի հավիտենականի սպանության:

114. Եթե հիշենք սուրբ հայրերի գործերը, մեզ ծանր չէր թվա, ինչ որ տանում ենք, առավել ևս [եթե հիշեք] Քրիստոսի վարքը:

115. Ում որ վա՛րքն է խոտելի, [խոտելի է] նաև քարոզությունը:

116. Արտասուքները անմիջապես հանգցնում են աշխարհիկ ցանկությունների բոցը:

109. Որ յետ առնլոյ զսուրբ կարգն սահեսցի ի բղջախոհական մեղս, այնպիսին լուծեալ եղիցի ի սուրբ կարգէն:

110. Ներկա հեշտութիւն ոչ յագեցուցանէ, ապառնին չարչարէ և անցեալն ոչ հեշտացուցանէ:

111. Մեծ կատարելութիւն է ճանաչել զանկատարութիւն մեր:

112. Որ ոչ կարէ տանել զանկատարելութիւն այլոց, ինքն վկայէ անկատարելութեան ինքեան:

113. Որ ըմբռնեալ լինի քաղցրութեամբ ներկայիս, ածի ի սպանումն յաւիտենից:

114. Եթէ ի միտ ածէաք զգործս սուրբ հարանցն, ոչ թուէր մեզ ծանր, զոր ինչ տևեմք, ևս առաւել՝ զվարս Քրիստոսի:

115. Որոյ վարքն է խոտելի, նա՝ քարոզութիւն:

116. Զբոց աշխարհական ցանկութեանց փութով շիջուցանեն արտասուքն:

117. Արդարութիւն մեր առաջի քնութեան Աստուծոյ անիրաւութիւն է, և աղտեղանայ առ նրբահայեցութիւն նորա:

118. Գործ արիութեան է յաղթել զմարմինն և ընդդիմանալ յատուկ կամաց իւրոց:

119. Յորժամ միտքն է անհոգ դարանակալութեամբ բանսարկուին յանկարծակի նետիւք մեղացն խոցեալ լինի:

120. Համբերութիւն է օտար չարին համբերել և ընդդէմ չարչարողին ոչ ինչ կերպիւ ոխակալ լինել:

121. Առանց սրոյ և հրոյ կարեմք մարտիրոս լինել, եթէ այլոց չարեացն համբերեմք:

122. Որ յաղթէ զինքն, զօրաւոր է քան զամենայն:

123. Զառաքինութիւն համբերութեան մեծ համարիմ, քան զնշանս և զարուեստս:

124. Նախ հայեաց ի նեղութիւն Քրիստոսի և դիւրագոյն կրեսցես զքոյն:

125. Որպէս կամնասայն ցորենոյն և խարտոցն երկաթոյն, այսպէս և նեղութիւն արդարոց:

126. Յաճախ յաջողմունք ժամանակաւորացս է ստոյգ նշան ապառնի թշուառութեանցն:

127. Աղօթք սրտին է և ոչ շրթանց և ոչ հայի Աստուած ի բանս աղաչողին, այլ՝ ի սիրտն, թէ որպէս պատրաստէ յընդունելն:

128. Էն ոմանք յեկեղեցին, որ ունին զաղօթս երկարս, այլ ոչ ունին զվարս աղօթողաց, և զի՞նչ զարմանք, եթէ այնպիսուն աղօթքն ոչ լինի լսելի:

129. Յաւուրս միաշաբաթուցն պարտ է ի բաց կալ յամենայն մարմնաւոր աշխատութեանց, և միայն աղօթից և գոհութեանց պարապիլ:

130. Լպրծուկ է թշնամին հին, այսինքն՝ Սատանայ, և թէ ոչ ըմբռնեսցի գլուխն, փութով, բոլորն ի ներքս սողայ:

131. Ի դրախտին ուրախութենէն փափուկ կերակրովն անկաք, պարտիմք ջանալ որչափ կարեմք պարկեշտանալ ի խորտկաց և յագեցմանց, զի դարձեալ կանգնեսցուք:

132. Սէրն ցուցանի քաղցր բանիւ և առատ տրօք, զի սէրն հաստատի գործով:

133. Զինուորն Քրիստոսի ի պատերազմ ընդդէմ թշնամեացն զվահանն

117. Մեր արդարությունը Աստծու քննության առաջ անիրավություն էին, եվաստանում է նրա նրբահայեցության առաջ:

118. Քաջագործություն է հաղթել մարմնին և ընդդիմանալ իր հատուկ ցանկություններին:

119. Երբ միտքը անհոգ է, բանսարկուի դարանակալությամբ հանկարծակի խոցվում է մեղքի նետերից:

120. Համբերություն է դիմանալ ուրիշի չարին և չարչարողի դեմ ոչ մի ոխ չպահել:

121. Առանց սրի և հուրի կարող ենք մարտիրոսանալ, եթե համբերենք այլոց չարության:

122. Նա, ով հաղթում է ինքնիրեն, բոլորից ավելի զորավոր է:

123. Համբերության առաքինությունը ավելի մեծ եմ համարում, քան նշաններն ու արվեստները:

124. Նախ նայիր Քրիստոսի նեղություններին, և ավելի դյուրին կկրես քոնը:

125. Ինչպես կամնասայլն է ցորենի համար և խարտոցը՝ երկաթի, այսպես է նաև նեղությունը արդարների համար:

126. Հաճախ մեր ժամանակավոր հաջողությունը ստույգ նշան է ապագա թշվառությանց:

127. Աղոթքը սրտի գործ է և ոչ թե շրթունքների, և Աստված չի նայում աղաչողի խոսքերին, այլ՝ սրտին, թե ինչպես պատրաստվի ընդունելու:

128. Եկեղեցում կան մարդիկ, որոնք երկար են աղոթում, բայց աղոթողի վարք չունեն, և ի՞նչ զարմանալու բան կան, եթե այդպիսի մարդու աղոթքը լսելի չլինի:

129. Կիրակի օրը պետք է հեռու մնալ ամեն մարմնական աշխատանքից և միայն աղոթքով և գոհություն տալով զբաղվել:

130. Հին թշնամին, այսինքն Սատանան, լպրծուն է, և եթե գլուխը չբռնվի, շուտով բոլորը ներս կսողոսկի:

131. Դրախտի ուրախությունից ընկանք փափուկ կերակրով, պետք է ջանանք, որքան կարող ենք, պարկեշտ մնալ խորտիկներից ու հագեցումներից, որպեսզի նորից վերականգնվենք:

132. Սերը ցուցաբերվում է քաղցր խոսքով և առատաձեռությամբ, որովհետև սերը գործով է հաստատվում:

133. Քրիստոսի զինվորը թշնամու դեմ պատերազմում համբերության վահանը առաջ է երկարում, որպեսզի կորուստի չմատնվի, իսկ պատերազմի պատրաստվելիս սիրո նետեր է արձակում, որպեսզի հաղթի:

134. **Բեռնարտոսի կողմից ասված.** Առաքինությունը փնտրվում է աշխատանքով, սովորեցվում է խոնարհությամբ և ստացվում է սիրով:

135. Եթե Աստծու ծառան չկարդա, հաճախակի չաղոթի և կամ առանց տատանվելու այլ բարի գործերով չզբաղվի, մեղսագործության ոգի կմտնի նրա մեջ:

136. Անգործությունը մայրն է բոլոր մոլությունների և խորթ մայրը բոլոր առաքինությունների, քանի որ պարապությունից է գալիս հետաքրքրասիրությունն ու շատախոսությունը, նա հավաքատեղին է բոլոր չարությանց:

137. Ինձ ետ պահեցի մսից ու գինուց, որպեսզի մարմինս առավել սնունցանելով նրա հետ ցանկություններ ևս չսնուցեմ, հացը չափավոր եմ ուտում, որպեսզի հագեցած որովայնով չձանձրանամ աղոթելուց:

համբերութեան յառաջկոյս դնէ, զի մի կորիցէ և պատրաստեալ ի պատերազմ արձակէ ցնետս սիրոյն, զի յաղթեսցէ:

134. **Բեռնարտոսի ասացեալ.** Առաքինութիւն աշխատութեամբ խնդրի, խոնարհութեամբ ուսուցանի, և սիրով ստացեալ լինի:

135. Զի եթէ ծառայն Աստուծոյ ոչ ընթեռնուցու կամ ստէպ աղօթեսցէ և կամ զբաղեսցի յայլ ինչ գործս բարիս առանց կարծեաց, մտանէ ի նա հոգի պոռնկութեան:

136. Դատարկութիւն է մայր ամենայն մոլութեանց և մօրու ամենայն առաքինութեանց, քանզի դատարկութենէն յառաջ գայ հետաքրքրութիւն և շատախօսութիւն. նա է ժողովարան ամենայն չարեաց:

137. Պարկեշտացայ ի մտոյ և ի գինոյ, զի մի ի յառաւել սնուցանելոյ զմարմինս սնուցից ընդ նմին և զցանկութիւնս. հաց չափով առնում, զի մի յագեալ յորովայնիս ձանձրացայց յաղօթս:

138. Եթէ շրջեցայց ընդ երկինս և ընդ երկիր, ընդ ծով և յամենայն, որ ի նոսա՝ ոչ ուրեք գտանեմ զՏէր Յիսուս, եթէ ոչ ի խաչին:

139. Պարկեշտ կերակրոյն հետևի պարկեշտ քուն և հանդարտութիւն:

140. Տուր միշտ նեղութիւն ինձ Տէր, զի իցես հանապազ ընդ իս:

141. Որպէս ջուր և հուր ոչ կարեն լինել ի միասին, նոյնպէս սէրն Աստուծոյ և սէր աշխարհիս ոչ բնակին ի միում սրտի:

142. Յորժամ մտանես յեկեղեցին աղօթել կամ սաղմոսել, զամենայն ամբոխումն մտաց քոց արտաքս թողցես, զի կարասցես միայն պարապել յԱստուած:

143. Մեծ գարշութիւն է, զի անարգ որթն կամեսցի լինել մեծատուն, վասն որոյ Աստուածն փառաց և Տէրն Սաբաւովթն կամեցաւ աղքատանալ:

144. Ով մարդ, տես, թէ ուստի գաս՝ զամօթի հար, և թէ ուր ես՝ յոգոց հան, և թէ յո երթաս՝ դողայ:

145. Յամենայն գործս քո յիշեա զվախճան քո, այսինքն՝ զահագնութիւն մահուն, զնրբահայեցութիւն դատաւորին և զերկիւղ բորբոքեալ գեհենոյն և յաւիտեան ոչ մեղանչիցիս:

146. Հեշտութիւն հրեշտակաց են արտասուք մեղաւորաց և հուր դիւացն՝ արտասուք զղջացելոցն:

147. Մեղայ մեղս մեծամեծս, խիղճ մտաց իմոց ամբոխեալ է, այլ ոչ յուսահատեալ, քանզի ոչ մեղայ այնքան առ ի մահ, որ ոչ բաւեսցի մահուամբն Քրիստոսի:

148. Բազումք բազումս գիտեն և զինքեանս ոչ գիտեն, զայլս տեսանեն և զինքեանս՝ ոչ, զԱստուած խնդրեն երևելեօքս և զինքեանս թողուն ի ներքուստ: Ես վասն այն թողում զարտաքինսն և դառնամ ի ներքինսն, և ի ներքնոցն ելանեմ ի վերինսն, զի ճանաչեցից, թէ ուստի գամ և յո երթամ, ինչ եմ և ուստի: Եւ այսպէս ճանաչելովն զիս՝ կարացից ճանաչել զԱստուած, զի որչափ յառաջանամ ի ճանաչումն իմ այնչափ մերձենամ ի ճանաչումն Աստուծոյ:

149. Որ պարծի զգեստիւք նմանէ նա գողոյ, որ պարծեսցի ի նշանէն, որ դրոշմեալ է զանթիւ ի ճակատն նորա վասն մեղացն ի յորս ընմբռնեցաւ:

150. Որչափ էաք մեք աշխարհի, պարտական էաք ծնօղացն մերոց, այլ յետ ուրանալոյն զմեզ ևս առաւել ազատեալ եմք ի հոգոց և ի զբաղմանց նոցա:

(Շարունակելի)

138. Եթե շրջեմ երկնքում և երկրում, ծովում և ամեն ինչում, որ նրանց մեջ է, ոչ մի տեղ չեմ գտնի Տեր Հիսուսին, բացի խաչից:

139. Համեստ կերակրին կհետևի հաճելի քուն և հանդարտություն:

140. Տեր, միշտ նեղություն տուր ինձ, որ հանապազ ինձ հետ լինես:

141. Ինչպես ջուրը և հուրը չեն կարող միասին լինել, այնպես էլ Աստծու սերն ու աշխարհի սերը չեն բնակվում մեկ սրտում:

142. Երբ եկեղեցի մտնես աղոթելու կամ սաղմոս ասելու, քո խճողված մտքերը դրսում թող, որպեսզի կարողանամ միայն Աստծու շուրջ կենտրոնանալ:

143. Մեծ չարիք է, եթե անարգ որթատունկը կամենում է մեծահարուստ լինել, քանի որ փառաց Աստվածն ու զորությանց Տերը ուզեց աղքատանալ:

144. Ով մարդ, տես, թե որտեղի՛ց ես գալիս, և ամաչիր, [տե՛ս], թե ուր ես, և հոգոց հանիր, [տե՛ս], թե ո՛ւր ես գնում, և դողա՛:

145. Քո բոլոր գործերում հիշիր քո վախճանը, այսինքն մահվան սարսափը, դատավորի նրբահայեցությունն ու դժոխքի բորբոքված կրակը, և հավիտյան մեղք չես գործի:

146. Մեղավորների արցունքը հրեշտակների հաճույքն է, իսկ դևերի կրակը՝ զղջացողների արտասուքը:

147. Մեծ մեղքեր գործեցի, իմ խիղճը ծանրաբեռնված է, բայց ոչ հուսահատ, քանի որ այնքան մեղք չգործեցի մինչև մահ, որ Քրիստոսի մահով քավություն չստանա:

148. Շատերը շատերին ճանաչում են, բայց իրենք իրե՛նց չեն ճանաչում, ուրիշներին տեսնում են, բայց իրենց՝ ոչ, Աստծուն փնտրում են արտաքին ձևերով, բայց իրենք մնում են ներսում: Ես այդ պատճառով թողնում եմ արտաքին բաներն ու դառնում եմ ներքիններին, և ներքիններից բարձրանում եմ դեպի վերինները, որպեսզի իմանամ, թե որտեղից եմ գալիս և ուր եմ գնում, ի՛նչ եմ և որտեղից: Եվ այսպես, ինձ ճանաչելով կարո՛ղ եմ ճանաչել Աստծուն, որովհետև ինչքան որ առաջանամ ինձ ճանաչելու գործում, այնքան կմոտենամ Աստծու ճանաչման:

149. Ով որ պարծենում է զգեստներով, նման է այն գողին, որ պարծենում է այն անթիվ նշաններով, որ դրոշմվել են նրա ճակատին այն մեղքերի համար, որոնց մեջ բռնվեց:

150. Ինչքան որ մենք աշխարհում էինք, պարտական էինք մեր ծնողներին, սակայն մեզ ուրանալուց հետո, այլևս ազատ ենք նրանց հոգսերից ու զբաղումներից:

(Շարունակելի)